

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

“29 ” սեպտեմբերի 2011թ.


№ 141- Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ՀԱՄԱՑԱՆՑԱՅԻՆ ԿԱՅՔԻ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ԱՇԽԱՏԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղեկատվության ազատության մասին» Հայաստանի Հանրապետության 2003թվականի սեպտեմբերի 23-ի ՀՕ-11-Ն օրենքի 7-րդ և 12-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության նախագահի 1997թ մայիսի 6-ի «Հայաստանի Հանրապետության մարզերում պետական կառավարման մասին» ՆՀ-728 հրամանագրի 1.6 կետով, համաձայն Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման նախարար, փոխվարչապետի 2011թվականի սեպտեմբերի 9-ի N01/18/581-11 հանձնարարականի, մարզպետարանի պաշտոնական համացանցային կայքի սպասարկման աշխատանքները պատշաճ կազմակերպելու համար **ո Ր Ո Շ ՈՒ Մ Ե Մ**

1. Հաստատել «Սյունիքի մարզպետարանի պաշտոնական համացանցային կայքի սպասարկման աշխատակարգը՝ համաձայն հավելվածի:
2. ՀՀ Սյունիքի մարզպետարանի աշխատակազմի ղեկավարին.
ապահովել սույն որոշումից բխող անհրաժեշտ գործառույթների իրականացումը:

ՀՀ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ



Ս.ԽԱԶԱՏՐՅԱՆ

2011թ. սեպտեմբերի 29
ք. Կապան

ԱՇԽԱՏԱԿԱՐԳ

ՀՀ Սյունիքի մարզպետարանի համացանցային պաշտոնական կայքի սպասարկման

1. ՀՀ Սյունիքի մարզպետարանի համացանցային պաշտոնական կայքի նկարագրությունը

<http://syunik.gov.am> -ը ՀՀ Սյունիքի մարզպետարանի համացանցային պաշտոնական կայքն է (այսուհետ՝ Կայք), որի նպատակն է ապահովել՝

- մարզի կառավարման և տեղական ինքնակառավարման համակարգերի, նրանց կազմի և կառուցվածքի վերաբերյալ հանրությանը տեղեկատվության ներկայացումը,
- տեղեկությունների մատչելիությունն ու հրապարակայնությունը,
- մարզպետարանի տնօրինության տակ գտնվող տեղեկատվության գրանցումը, դասակարգումը և պահպանումը,
- հավաստի և ամբողջական տեղեկատվության տրամադրումը:

Կայք մուտք գործել կարելի է նաև ՀՀ տարածքային կառավարման նախարարության www.mta.gov.am կայքի գլխավոր էջում տեղադրված հղմանը նշում կատարելով:

2. ՀՀ Սյունիքի մարզպետարանի համացանցային պաշտոնական կայքի կառուցվածքը.

2.1 Ելակետում տեղադրված է ՀՀ Սյունիքի մարզպետի ողջունի խոսքը, ցուցադրվում են վերջին նորությունները:

2.2 Մարզպետարանի <http://syunik.gov.am> Կայքը կառուցված է հետևյալ բաժիններից.

Մարզպետարան, Տեղեկատվական կենտրոն, Համայնքներ, Ծրագրեր, Մարզի սոցիալ-տնտեսական իրավիճակը, Ընդհանուր տեղեկություններ, Արտաքին կապեր, Իրավական ակտեր, Կազմակերպություններ, Քաղաքացիների ընդունելություն, Հայտարարություններ, Դիմեք մեզ, Քննարկումներ, Հղումներ:

Մարզպետարան ենթահամակարգում ներկայացվում է տեղեկատվություն՝ մարզպետարանի մասին, կառուցվածքի, որի մեջ ներառված են մարզպետի աշխատակազմը և աշխատակազմի կառուցվածքային ստորաբաժանումները՝ ղեկավարների կենսագրություններով ու տվյալ պաշտոնի գործառույթների և իրավասությունների մասին, ՊԿՀ-ի կանոնադրությունը, բյուջեի՝ ՀՀ պետական բյուջեից մարզպետարանին հատկացված գումարների մասին, ՀՀ Սյունիքի մարզպետի ամենամյա հաշվետվությունները, մարզի խորհրդի նիստերի օրակարգերը և արձանագրությունները:

Տեղեկատվական կենտրոն ենթահամակարգը իր մեջ պարունակում է պարբերաբար մարզին վերաբերվող նորությունների, մարզպետի ուղերձների և հարցազրույցների, ինչպես նաև հորեյանական միջոցառումների մասին տեղեկատվական նյութեր:

Համայնքներ ենթահամակարգում ներառվում է տեղեկատվություն մարզի տեղական ինքնակառավարման մարմինների վերաբերյալ: Առանձնացված տեսքով համառոտ նկարագրված են մարզի բոլոր համայնքները, ներկայացված են համայնքների ղեկավարներ կոնտակտային և կենսագրական տվյալները, համայնքների ավագանու անդամների ցուցակները, մարզի համայնքների ղեկավարի և ավագանու որոշումները, համայնքային բյուջետային եկամուտները և ծախսերը, համայնքի ղեկավարների հաշվետվությունները, ինչպես նաև վարչական հսկողության արձանագրությունները:

Ծրագրեր ենթահամակարգում ներկայացվում են մարզի սոցիալ-տնտեսական զարգացման ծրագիրը, կիսամյակային աշխատանքային պլանի մոնիտորինգի և գնահատման տարեկան հաշվետվությունները, մարզպետարանի աշխատակազմի աշխատանքային և միջազգային կազմակերպությունների կողմից մարզում իրականացված ծրագրերը:

Մարզի սոցիալ-տնտեսական իրավիճակը ենթահամակարգում ներառվում է տեղեկատվություն ՀՀ Սյունիքի մարզի սոցիալ-տնտեսական իրավիճակի, մարզային հիմնախնդիրների և գերակայությունների մասին:

Ընդհանուր տեղեկություններ ենթահամակարգում ներկայացվում են տեղեկություններ Այունիքի մարզի պատմաաշխարհագրության, զբոսաշրջության, պատմամշակութային հուշարձանների, բնության հատուկ պահպանվող տարածքների վերաբերյալ:

Արտաքին կապեր ենթահամակարգում ներկայացվում են Այունիքի մարզում իրականացվող արտաքին կապերի ընդլայնմանն ու զարգացմանն ուղղված միջոցառումները, միջազգային կազմակերպությունների, դեսպանությունների ներկայացուցիչների այցերը, ձեռք բերված պայմանավորվածությունները:

Իրավական ակտեր ենթահամակարգում ներկայացվում են ՀՀ օրենքներ, Նախագահի հրամանագրեր, Կառավարության որոշումներ, մարզպետի որոշումներն ու կարգադրությունները, ինչպես նաև այլ իրավական ակտեր:

Կազմակերպություններ ենթահամակարգի միջոցով տրվում է տեղեկույթ մարզի կազմակերպությունների՝ ՀՀ գործադիր մարմինների տարածքային ծառայությունների, հասարակական կառույցների, ձեռնարկությունների, սոցիալական, կրթական, առողջապահական, մշակույթի և սպորտի հաստատությունների, մարզում գործող լրատվամիջոցների և ազգային փոքրամասնությունների վերաբերյալ:

Քաղաքացիների ընդունելություն ենթաբաժնում ցանկացած այցելու համակարգում կարող է ծանոթանալ մարզպետի մոտ քաղաքացիների ընդունելության ժամանակացույցին, կարգին, ընդունելության համար ցուցակագրված քաղաքացիների ցանկին և ընդունելության արդյունքներին՝ եռամսյակային կտրվածքով:

Հայտարարություններ ենթաբաժնում տեղ են գտել տարբեր հայտարարություններ՝ թափուր աշխատատեղերի, հայտարարված մրցույթների վերաբերյալ:

Դիմեք մեզ ենթահամակարգում ներկայացվում է պետական կառավարչական հիմնարկի հասցեն, հեռախոսի և ֆաքսի համարները, էլեկտրոնային փոստը, ինչպես նաև համացանցային քարտեզի ընձեռած հնարավորություններով տեղեկանում ենք մարզի աշխարհագրական դիրքի մասին:

Քննարկումներ ենթահամակարգը հնարավորություն է ընձեռում հասարակության քննարկմանը ներկայացնելու հետաքրքրություն ներկայացնող թեմաներ, որոնց արդյունքների հիման վրա ձևավորվում է տվյալ հարցի վերաբերյալ հասարակական կարծիք:

Հղումներ բաժնում նախատեսված են հղումներ դեպի ՀՀ նախագահի, ՀՀ կառավարության, ՀՀ ազգային ժողովի, ՀՀ նախարարությունների ու կառավարությանն առընթեր մարմինների և այլ պաշտոնական կայքեր:

- 3. Կայքը վարվում է հայերեն լեզվով:
- 4. Կայքի սպասարկումը և տեղեկատվության մուտքագրումը.

4.1. Կայքի գործառնության ընդհանուր պատասխանատվությունը կրում է մարզպետարանի աշխատակազմի ղեկավարը, իսկ սպասարկումն ապահովում են աշխատակազմի կառուցվածքային և առանձնացված ստորաբաժանումները:

4.2 Աշխատակազմի ղեկավարը ստորաբաժանումների ղեկավարների ներկայացմամբ նշանակվում է տվյալ ստորաբաժանման գործունեության ոլորտին առնչվող տեղեկատվության մուտքագրման և ներկայացման պատասխանատու անձ:

4.3 Կայքի տեղեկատվական սպասարկումը իրականացնում է աշխատակազմի տեղեկատվության և հասարակության հետ կապերի բաժինը:

4.4. Կայքում տեղադրվող նյութերի ընտրության և դրանց բովանդակության համար պատասխանատվություն է կրում համապատասխան ստորաբաժանման ղեկավարը:

Համայնքների և կազմակերպությունների կողմից Կայքում նյութեր տեղադրելու դեպքում տեղեկատվությունը ներկայացվում է մարզպետարանի աշխատակազմի պատասխանատու ստորաբաժանման միջոցով:

4.5. Աշխատակազմի ստորաբաժանումների կողմից կայքում տեղեկատվություն մուտքագրելու համար ստորաբաժանման ղեկավարը տեղեկատվությունը համաձայնեցնում է ոլորտը համակարգող մարզպետի տեղակալի հետ:

**ՀՀ Այունիքի մարզպետարանի
աշխատակազմի ղեկավար**



Ռ. Նազարյան